

Ցերեկային ճամբարների վերաբացման Արձանագրություն. Հավելված Կ

Վերջին թարմացումները. (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

3/14/2021. <<Դեմքի ծածկոցներ>>բառակապակցությունը փոխարինվել է <<դիմակ>> բառով:

3/11/2021.Վերացվել է համընդհանուր կարանտինի պահանջը վարակված անձի հետ իրենց վարակիչ ժամանակահատվածում նույն խմբում կամ դասարանում գտնվող բոլոր անհատների համար:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է փուլային մոտեցում՝ հիմնված գիտության և հանրային առողջապահության փորձի վրա՝ թույլ տալու անվտանգ վերաբացել որոշ տարածքներ: Ստորև ներկայացված պահանջները վերաբերում են ցերեկային ճամբարներին, որոնց թույլատրվում է վերաբացվել Նահանգի Առողջապահության Պատասխանատուի Հրամանով: Ի հավելում այդ հատուկ տարածքների համար Նահանգապետի կողմից սահմանված պայմանների՝ այս տեսակի բիզնեսները պետք է հետևեն նաև Ցերեկային ճամբարների սույն Ստուգաթերթում սահմանված պայմաններին:

Լոդափնյա ճամբարները և սերֆինգի ճամբարները պետք է համապատասխանեն ցերեկային ճամբարի սույն արձանագրությանը և ներկայացնեն արձանագրության լրացված ստուգաթերթը համապատասխան լոդափի իրավասու մարմնին (քաղաք, շրջան կամ նահանգ)՝ թույլտվություն ստանալու համար:

Ցերեկային ճամբարները, որոնք արտոնագրված են որպես Վաղ Խնամքի և Կրթության Ծրագրեր, պետք է համապատասխանեն նաև [Դպրոցական Տարիքի Երեխաների Ցերեկային Խնամքի Արձանագրության](#) և [ECE Ծրագրերի համար Բռնկման Կառավարման](#) մեջ նշված ախտանիշների և վարակի ազդեցության հետ կապված ստուգումներին վերաբերող պահանջներին, մեկուսացմանը, կարանտինին և հաշվետվություններին:

Ցանկացած ցերեկային ճամբար, որը նախատեսում է ցերեկային խնամք ապահովել դպրոցահասակ երեխաների համար և ընդլայնել իր գործունեությունը երեխաների խնամքի արտոնագրի սահմաններից դուրս, կամ իր արտոնագրից զերծ կարգավիճակի սահմաններից դուրս, պետք է հաղորդակցվի Համայնքային Խնամքի Արտոնագրման Տարածքային Գրասենյակի հետ՝ պարզելու, թե արդյոք իրենից պահանջվում է արտակարգ իրավիճակում ապահովել արտոնագրման լրացուցիչ պահանջներից հրաժարում: Երեխաների խնամքից հրաժարվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար՝ տե՛ս «Նահանգի Ուղեցույցը և ՀՏՀ-ը՝ Երեխաների Խնամքից Հրաժարվելու Մասին: [Մատակարարի Տեղեկատվության Ծանուցում \(PIN\) 20-22-CCP](#)»:

ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄ K-12 ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը պահանջում է, որ K-12 դպրոցների տարածքներում գործող ցերեկային ճամբարները, որոնք տրամադրում են դպրոցահասակ երեխաների ցանկացած տեսակի ցերեկային խնամք, լրացնեն ու վարչությանն ուղարկեն ծանուցում՝ երեխաների խնամքի գործունեության շրջանակի և երեխաների խնամքի արտոնագրի, կամ արտոնագրից հրաժարման կարգավիճակի նկարագրությամբ: Ծանուցման լրացման հրահանգները և առցանց հարցման հղումը հասանելի են այստեղ: Եթե դուք արտոնագրված եք ECE ծառայություններ մատուցելու համար և սպասարկում եք միայն նախակրթական և ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների, կարիք ՉԿԱ, որ ներկայացնեք այս ծանուցումը: Եթե ձեր ծրագիրը զբաղվում է դպրոցական տարիքի երեխաների խնամքով ցանկացած, բայց ոչ K-12 դպրոցի տարածքում, ապա կարիք ՉԿԱ, որ դուք ներկայացնեք այս ծանուցումը:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ այս փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելի դառնալու դեպքում, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելեսի Շրջանի վեբ կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> տեղեկանալու այս փաստաթղթի թարմացումներին:

Այս ստուգաթերթն ընդգրկում է.

- (1) Աշխատավայրի գործունեության ծրագրերն ու գործելակերպը՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը
- (2) Ֆիզիկական հեռավորության պահպանումն ապահովող միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկողությունն ապահովող միջոցառումներ
- (4) Հաղորդակցություն աշխատակիցների և հանրության հետ
- (5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ

Նշված հինգ ոլորտները պետք է իրականացվեն, մինչև ձեր հաստատությունը մշակում է վերաբացման որևէ արձանագրություն:

Սույն արձանագրությամբ սահմանված բոլոր Ցերեկային ճամբարները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ տվյալ ճամբարի համար:

Ցերեկային ճամբարի
անունը՝

Հաստատության հասցեն՝

**Ա. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՈՒՂՂՎԱԾ
ԱՇԽԱՏԱՎԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

- Յուրաքանչյուր ոք, ով կարող է իր աշխատանքային պարտականությունները կատարել տնից, պետք է հանձնարարվի անել այդպես:
- Անձնակազմի խոցելի անդամներին (65 տարեկանից բարձր և քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց) հնարավորության դեպքում պետք է հանձնարարվի այնպիսի աշխատանք, որը կարելի է կատարել տնից:
- Հնարավորության սահմաններում աշխատանքային գործընթացները պետք է վերակազմավորվեն՝ մեծացնելու աշխատակիցների տնից աշխատելու հնարավորությունը: Դիտարկեք փոփոխված պարտականություններ պահանջող աշխատողներին, օգնականներին, փորձակներին և կամավորներին առաջարկել այնպիսի աշխատանքներ, որոնք նվազագույնի կհասցնեն հաճախորդների և այլ աշխատակիցների հետ նրանց շփումը (օրինակ՝ գանձապահ աշխատելու փոխարեն՝ կատարել գույքագրման կառավարում, կամ վարչական կարիքների կառավարում՝ հեռակա տարբերակով):
- Ֆիզիկական հեռավորությունը առավելագույնի հասցնելու համար պետք է ներդրվեն այլընտրանքային, ճկուն, կամ հերթափոխով գրաֆիկներ:
- Բոլոր աշխատակիցներին (ներառյալ՝ վճարվող անձնակազմին և կամավորներին միասին՝ անվանելով որպես «աշխատակիցներ») ասվել է չներկայանալ աշխատանքի հիվանդ լինելու դեպքում, կամ եթե նրանք շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Աշխատակիցները պետք է գիտակցեն, որ անհրաժեշտ է հետևել Հանրային Առողջապահության Վարչության ուղեցույցին՝ ինքնամեկուսացման և կարանտինի համար, եթե այն կիրառելի է: Աշխատավայրի արձակուրդի ծրագրերը պետք է վերանայվեն և փոփոխվեն՝ ապահովելու, որ հիվանդության պատճառով տանը մնալու դեպքում աշխատակիցները չտուժեն:
- Տեղեկացվելով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը **դրական է**, գործատուն պետք է տեղում ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի «հիվանդ(ներ)ը» մեկուսանա(ն) տանը, ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտին պահպանեն: Գործատուի ծրագիրը պետք է ներառի COVID-19-ի թեստավորման հասանելիություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են վարակման այլ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:
- Ախտանիշների ստուգումներն իրականացվում են՝ նախքան աշխատակիցներին կրոնիկապարկի աշխատավայր մտնել: Տեղանքը պետք է հետևի Հանրային Առողջապահության Վարչության [Որոշումներին](#), նախատեսված այն անձանց համար, որոնց մոտ ախտանիշները դրական են եղել մինչև աշխատավայր մտնելը, կամ աշխատավայրում գտնվելու ընթացքում: Ստուգումները պետք է ներառեն Որոշումներում նշված COVID-19 հավանական վարակի հետ համընկնող ախտանիշների ստուգում, ինչպես նաև պարզաբանում, թե արդյոք անհատը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրահանգների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Ցերեկային ճամբարներից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնել հաստատված COVID-19-ով վարակած բոլոր անձանց մասին, որոնք մինչև հիվանդության դրսևորման առաջին օրը, 14 օրերի ընթացքում ցանկացած պահի գտնվել են հաստատության

տարածքում: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի ախտանիշների դրսևորման առաջին օրը, կամ COVID-19-ի թեստ հանձնելու օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել:

- ❑ Հանրային Առողջապահության Վարչությանը հաստատության տարածքում COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել առցանց զեկուցման տարբերակով՝ համակարգչի կամ հեռախոսի միջոցով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ-հավելվածին՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>: Եթե առցանց զեկուցել հնարավոր չէ, ապա կարելի է զեկուցել ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Դեպքերի և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#), և այն ուղարկելով ACDC-Education@ph.lacounty.gov էլեկտրոնային հասցեին: Դեպքի մասին բոլոր ծանուցումները անհրաժեշտ է ներկայացնել դեպքի մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- ❑ Եթե 14 օրվա ընթացքում հաստատության տարածքում հայտնաբերվում է COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպք, գործատուն պետք է այդ խմբակային դեպքի մասին անմիջապես հաղորդի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ զեկուցման վերոնշյալ տարբերակով: Հանրային Առողջապահության Վարչությունը կհամագործակցի ցերեկային ճամբարի հետ՝ որոշելու, թե արդյոք խմբակային դեպքը բռնկում է, որը և կպահանջի հանրային առողջապահության կողմից բռնկման քննություն:
- ❑ Այն աշխատակիցներին, որոնք շփվում են ուրիշների հետ, պետք է անվճար տրամադրվի **դիմակ**, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի **դիմակը** ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել **դիմակներ**, պետք է կրեն ներքնի եզրին կտոր ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջներին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն:
- ❑ Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն **դիմակ**՝ բացառությամբ, երբ մենակ աշխատում են փակ դռներով սենյակներում, կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կիրառվող բացառությունն այն աշխատակիցների համար, որոնք աշխատում էին ամուր պատնեշներով խցիկներում, որոնց բարձրությունը գերազանցում էր աշխատակցի հասակը կանգնած ժամանակ, այլևս չի գործում:
- ❑ Աշխատակիցներին հանձնարարված է ամեն օր լվանալ կամ փոխել իրենց **դիմակները**:
- ❑ Դիմակների պատշաճ և ճշգրիտ կիրառությունը ապահովելու համար աշխատակիցները խրախուսված չեն ուտելու կամ խմելու իրենց ընդմիջումների համար նախատեսված ժամերից բացի այլ ժամերի, երբ նրանք կարող են ապահով կերպով հեռացնել դիմակները և մյուսներից պահպանել ֆիզիկական հեռավորություն: Ուտելու և խմելու ամբողջ ընթացքում աշխատակիցները պետք է մյուսներից պահպանեն առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն: Հնարավորության դեպքում նախընտրելի է ուտել և խմել բացօթյա տարածքներում և հեռու գտնվել մյուսներից: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը և խմելը ավելի նախընտրելի է ընդմիջումների սենյակներում ուտելուց և խմելուց, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը ապահովում է ավելի մեծ հեռավորություն և պատնեշներ աշխատողների միջև:
- ❑ Զբաղվածությունը նվազեցվել է, իսկ աշխատակիցների միջև տարածությունը հասցվել է առավելագույնի ցանկացած սենյակում կամ տարածքում, որոնք օգտագործվում են աշխատակիցների կողմից ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Դա իրականացվել է հետևյալ տարբերակներով.
 - Տեղադրելով զբաղվածության առավելագույն սահմանափակում, որը համապատասխանում է անձանց միջև սենյակներում կամ ընդմիջումների համար նախատեսված վայրերում առնվազն վեց ոտնաչափ թույլատրող հեռավորությանը, և
 - Փոփոխելով ընդմիջումների և ճաշելու ժամերն այնպես, որ նվազեցվի զբաղվածությունը սենյակներում, կամ ճաշելու և ընդմիջումների համար նախատեսված տարածքներում, և

- Տեղադրելով սեղաններն առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ և ապահովելով վեց ոտնաչափ տարածք նստատեղերի միջև՝ հեռացնելով կամ ամրացնելով նստատեղերը՝ նվազեցնելու համար զբաղվածությունը, հատակին տեղադրելով նշաններ՝ ապահովելու հեռավորությունը և դասավորելով նստելն այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Պատնեշների կիրառությունը խրախուսվում է՝ կանխելու հետագայում վարակի տարածումը, սակայն այն չպետք է դիտարկվի որպես զբաղվածության նվազեցմանը կամ ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ☐ Աշխատակիցներին առաջարկվել է նաև ձեռնոցներ այն առաջադրանքների համար, որոնց իրականացման համար նրանցից պահանջվում է դիպչել հաճախակի հպվող մակերեսների, կամ ախտահանիչների գնումում իրականացնել:
- ☐ Աշխատակիցներին հանձնարարվել է պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն այցելուներից և միմյանցից՝ Ցերեկային ճամբարի բոլոր տարածքներում: Անհրաժեշտության դեպքում աշխատակիցները կարող են մեկ ակնթարթով մոտենալ՝ օգնելու երեխաներին, կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- ☐ Պետքարանները և այլ ընդհանուր տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.
 - Պետքարաններ _____
 - Այլ _____
- ☐ Ախտահանիչներն ու այլ պարագաները աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում.

- ☐ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցների համար հետևյալ վայր(եր)ում.

- ☐ Աշխատակիցներին հիշեցվում է հաճախակի լվանալ ձեռքերը:
- ☐ Այս արձանագրության պատճենը տրամադրվել է բոլոր աշխատակիցներին:
- ☐ Հնարավորության սահմաններում, յուրաքանչյուր աշխատակցի հատկացվել է իր անձնական պարագաները և հրահանգվել է խուսափել հեռախոսների, պլանշետների, երկկողմանի ռադիոկապի և այլ աշխատանքային պարագաների համատեղ օգտագործումից, որտեղ հնարավոր է: Նրանց հրահանգվել է նաև երբեք համատեղ չօգտագործել անձնական պաշտպանիչ միջոցները:
- ☐ Պարագաները համատեղ օգտագործելու անհրաժեշտության դեպքում՝ ախտահանվում են տվյալ մակերեսի համար համապատասխան մաքրող միջոցով՝ հերթափոխերի միջև, կամ յուրաքանչյուր օգտագործումից հետո՝ կախված նրանից, թե որն է ավելի հաճախակի լինում, ներառյալ գրասենյակում համատեղ օգտագործվող սարքավորումները, ինչպիսիք են պատճենահանող սարքերը, ֆաքսի սարքերը, տպիչները, հեռախոսները, ստեղնաշարերը, կարիչները, կարիչ հանող գործիքները, գրենական պիտույքները, ընդունարանի տարածքների մակերեսները, համատեղ օգտագործման աշխատակայանները, առդիո և տեսասարքավորումները, ռադիոսարքերը և այլն:
- ☐ Աշխատակիցներին տրամադրվում է ժամանակ իրենց հերթափոխի ընթացքում մաքրման գործողություններ կատարելու համար: Մաքրման հանձնարարությունները նշանակվում են աշխատանքային ժամերի ընթացքում, որպես աշխատակիցների աշխատանքային պարտականությունների մի մաս: Անհրաժեշտության դեպքում փոփոխեք ժամերը՝ ապահովելու

պարբերաբար և պատշաճ մաքրում՝ ինչպես հարկն է: Մաքրման աշխատանքների ավելացած ծավալի կատարմանն օժանդակելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կարող են ներգրավվել երրորդ կողմ հանդիսացող մաքրման ծառայություններ առաջարկող ընկերությունները:

- Մշտապես վերահսկեք անձնակազմի բացակայությունները և հնարավորության դեպքում ունեցեք վերապատրաստված պահեստային անձնակազմ:
- Աշխատանքային պայմաններից բացի, այս ստուգաթերթում նկարագրված բոլոր քաղաքականությունները վերաբերվում են նաև առաքման ծառայություն մատուցող անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, ովքեր ներկա են տարածքում որպես երրորդ կողմ:
- Ընտրովի-Նկարագրել այլ միջոցառումներ.

Բ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՄԵԿՆՈՒՄ

- Սահմանափակեք ճամբարում գտնվող անձանց թիվը այնքան, որ հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- Եթե տրանսպորտային միջոցները (օրինակ՝ ավտոբուսները) օգտագործվում են ճամբարի կողմից, վարորդները պետք է կիրառեն անվտանգության բոլոր գործողություններն ու արձանագրությունները, որոնք նախատեսված են անձնակազմի մյուս անդամների համար (օրինակ՝ ձեռքերի հիգիենա, **դիմակ** և ֆիզիկական հեռավորություն):
- Ճամբարի բոլոր մասնակիցները, անձնակազմի անդամները և այցելուները կրում են **դիմակներ**:
- Նվազագույնի հասցրեք ճամբարի աշխատակիցների, ճամբարի մասնակիցների և ընտանիքների միջև շփումը օրվա սկզբին և ավարտին:
- Կազմակերպեք ժամանման և հեռանալու ժամերն ու վայրերը այնքան հետևողականորեն, որքան հնարավոր է գործնականում, որպեսզի նվազագույնի հասցվեն ընտանիքների ծրագրավորման մարտահրավերները:
- Նախատեսեք մուտքի և ելքի ուղիներ՝ օգտագործելով հնարավորինս շատ մուտքեր: Գործարկեք այլ արձանագրություններ՝ սահմանափակելու մյուսների հետ անմիջական շփումը, որքան դա գործնականում հնարավոր է:
- Ապահովեք ֆիզիկական ուղենիշներ, ինչպիսիք են՝ ժապավեններ հատակների կամ մայրերի վրա և նշաններ պատերին՝ ապահովելու, որ ճամբարի աշխատակիցները և ճամբարի մասնակիցները պահպանեն առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն շարքերում և մյուս պահերին (օրինակ՝ միջանցքներում «միակողմանի ուղիներ» ստեղծելու ուղեցույցներ):
- Բացեք պատուհանները և մեծացրեք փոխադրամիջոցներում հեռավորությունը ճամբարականների ու վարորդների միջև, եթե հնարավոր է:

ՀԱՆԳՍՏԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- Ճամբարականները պետք է մնան միևնույն տարածքում և գործնականում հնարավորինս փոքր և հաստատուն խմբերում: Յուրաքանչյուր խմբում պահեք միևնույն ճամբարականներին և անձնակազմին, և ընդգրկեք ճամբարականներ նույն խմբում նույն ընտանիքից, որքան հնարավոր է շատ: Ցերեկային ճամբարի տարածքում խմբում թույլատրելի զբաղվածության առավելագույն չափն

Է մինչև 14 ճամբարական և անձնակազմի մինչև 2 վերահսկող անդամ:

- ❑ Բոլոր այցելուներից և ճամբարականներից պահանջվում է կրել **դիմակներ** ճամբարում գտնվելու ժամանակ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք լողում են, քնած են, ուտում/խմում են, կամ ներգրավված են մեծ ջանքեր պահանջող բացօթյա գործունեության մեջ (ինչպես օրինակ վազքը): Մեծ ջանքեր պահանջող նման գործունեությունը պետք է իրականացվի մյուսներից առնվազն 8 ոտնաչափ հեռավորության պահպանմամբ: Մա վերաբերում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ տարիքի երեխաներին: Միայն այն անձինք, որոնց բուժաշխատողը հանձնարարել է չկրել **դիմակներ**, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է **դիմակ** տրամադրել այն այցելուներին, որոնք ժամանում են առանց դրանց:
- ❑ Հնարավորինս մեծացրեք նստատեղերի, սեղանների և մահճակալների միջև հեռավորությունը: Դիտարկեք այլ միջոցներով ճամբարականներին առանձնացնելու հնարավորությունը, օրինակ՝ վեց ոտնաչափ հեռավորություն նստատեղերի միջև, միջնապատեր նստատեղերի միջև, հեռավորություն խթանելու նպատակով գծանշումներ հատակին, նստատեղերի այնպիսի դասավորություն, որը նվազեցնում է դեմ առ դեմ շփումը:
- ❑ Եթե հաստատությունը ներառում է ընդարձակ սենյակներ, այդ սենյակները կարող են բաժանվել ավելի փոքր տարածքների, որոնցից յուրաքանչյուրը կսպասարկի մինչև 14 ճամբարականներ: Սենյակների բաժանման դեպքում պետք է իրականացնել հետևյալ նախազգուշական միջոցառումները.
 - Բաժանարարների տեղադրման դեպքում պետք է հաշվի առնվեն հրդեհի, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանման բոլոր կանոնները:
 - Սենյակի բաժանարարները պետք է հասնեն հատակից մինչև առաստաղ և պատրաստված լինեն ոչ ծակոտ կեն նյութից, որպեսզի հնարավոր լինի կանոնավոր կերպով ախտահանել:
 - Սենյակի բաժանարարները պետք է տեղադրված լինեն այնպես, որ առավելագույնի հասցնեն օդափոխությունը և օդի հոսքը՝ թույլատրելով վերահսկել առողջ ջերմաստիճանը և հեռացնել աղտոտիչները:
 - Սենյակի բաժանարարները պետք է հատակին ամրացված լինեն այնպես, որ նվազագույնի հասցնեն սահելու և ընկնելու վտանգը:
 - Տարածքը բաժանելուց հետո յուրաքանչյուր տարածքում պետք է թողնվի համապատասխան տարածություն ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար (այսինքն՝ յուրաքանչյուր ճամբարականի միջև 6 ոտնաչափ հեռավորություն):
 - Բաժանված սենյակները պետք է ձևավորվեն այնպես, որ ճամբարականների խմբերը կարողանան մտնել և դուրս գալ՝ առանց հանդիպելու 14 ճամբարականներից բաղկացած երկրորդ խմբին: Եթե սենյակն ունի 2 դուռ, խորհուրդ է տրվում, որպեսզի ճամբարականների յուրաքանչյուր խումբ ունենա իր առանձին դուռը, որը կօգտագործվի միայն իրենց կողմից մտնելու և դուրս գալու համար:
 - Ելքը (դուրս գալու ուղի) պետք է հասանելի լինի ճամբարականներին՝ բաժանված սենյակի յուրաքանչյուր կողմում: Սենյակի յուրաքանչյուր տարածք պետք է ունենա մշտական և անխոչընդոտ ճանապարհ՝ տվյալ տարածքի ցանկացած կետից դեպի անվտանգության վայր: Բաժանարարների վրա կամ դրանց մոտ պետք է տեղադրվեն նշաններ, որոնք ցույց կտան ելքի ուղիները, և այդ ուղիներից օգտվելու ձևերը պետք է փորձարկվեն տարհանման վարժանքների ժամանակ՝ ապահովելու անվտանգությունը արտակարգ իրավիճակում:
- ❑ Դիտարկեք վերաձևավորման գործողություններ ավելի փոքր խմբերի համար և կահույքի ու

խաղատարածքների վերադասավորում՝ պահպանելու առանձնացումը:

- Անձնակազմը պետք է մշակի միմյանցից հեռավորությունը մեծացնելու ցուցումներ և մեթոդներ՝ նվազագույնի հասցնելու շարժումը դրսի և ներսի տարածքներում, որոնք հասկանալի են երեխաներին և համապատասխան նրանց տարիքային զարգացման մակարդակին:
- Սահմանափակեք ոչ էական այցելուներին, կամավորներին և միաժամանակ այլ խմբերի ներգրավմամբ գործողությունները:
- Սահմանափակեք խմբային գործողությունները, երբ դա հնարավոր է: Եթե հնարավոր չէ՝ կատարեք դրանք հերթափոխով, պատշաճ ձևով տարածություն պահպանեք անձանց միջև, պահեք խմբերը հնարավորինս փոքր ու կայուն կազմով և կատարեք ախտահանում յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Սահմանափակեք խմբային և արտադասարանային գործողությունները՝ թողնելով միայն նրանք, որոնց ժամանակ մասնակիցներն ու խմբի ղեկավարները կարող են պահպանել ֆիզիկական հեռավորություն և ձեռքերի պատշաճ հիգիենա:
- Անհրաժեշտության դեպքում օգտվեք այլընտրանքային տարածքներից, այդ թվում՝ դրսի տարածքներից, եթե եղանակը թույլ է տալիս: Օրինակ՝ դիտարկեք դրսի տարածքը և սրճարաններն ու օգտագործման այլ տարածքները մեծացնելու միջոցներ՝ թույլ տալու ֆիզիկական հեռավորություն:
- Որքան հնարավոր է նվազագույնի հասցրեք հավաքական գործողությունները:
- Շնչառական կաթիլներ առաջացնող գործողությունների համար, ինչպիսիք են ֆիզիկական ծանր գործողությունները, կամ երգելը, մեծացրեք անհատների միջև հեռավորությունը մինչև 8 ոտնաչափ և փորձեք անել դա դրսում:

ՄՆՈՒՆՂ

- Հնարավորության դեպքում, ճամբարականները պետք է բերեն իրենց սնունդը և պահպանեն ֆիզիկական հեռավորություն ուտելիս, կամ ուտեն իրենց փոքր խմբում՝ ընդհանուր սնվելու սրահի կամ սրճարանի փոխարեն: Ապահովեք սննդային ալերգիա ունեցող երեխաների անվտանգությունը:
- Օգտվեք սննդի սպասարկման մեկանգամյա օգտագործման պարագաներից (օրինակ՝ սպասք և ափսեներ): Եթե մեկանգամյա օգտագործման պարագաների օգտագործում հնարավոր չէ, ապահովեք, որ սննդի սպասարկման բոլոր բազմակի օգտագործման պարագաներին դիպչեն ձեռնոցներով, և որ դրանք լվացվեն ափսեների օձառով և տաք ջրով, կամ էլ ափսե լվացող սարքում: Անհատները պետք է լվանան իրենց ձեռքերը ձեռնոցները հանելուց հետո, կամ սննդի սպասարկման օգտագործված պարագաներին դիպչելուց անմիջապես հետո:
- Եթե որևէ միջոցառման ժամանակ առաջարկվում է ուտելիք բուֆետի կամ ընտանեկան ճաշկերույթի ոճով, ուտեստի փոխարեն նախապես պատրաստեք տուփեր կամ պայուսակներ յուրաքանչյուր մասնակցի համար: Խուսափեք սննդի կամ սպասքի համատեղ օգտագործումից:

Գ. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ապահովեք, որ ճամբարի ամբողջ աշխատակազմը և ընտանիքները տեղյակ լինեն սանիտարական ընդլայնված գործողությունների, ֆիզիկական հեռավորության ուղեցույցների և դրանց կարևորության, **դիմակների** պատշաճ օգտագործման, հանելու և լվանալու և **դեն նետման**, ախտանիշների ստուգման գործողությունների և COVID-19-ի բացառման հատուկ չափանիշների մասին:
- Նշանակեք աշխատակից (օրինակ՝ ճամբարի բուժքույր կամ առողջապահական խնամք ապահովող անձ),

որը պատասխանատու կլինի COVID-19-ի հետ կապված մտահոգություններին արձագանքելու համար: Ամբողջ աշխատակազմն ու բոլոր ընտանիքները պետք է իմանան, թե ով է այդ անձը և ինչպես կարելի է կապ հաստատել նրա հետ: Այս անձը պետք է վերապատրաստված լինի՝ համակարգելու փաստաթղթագրումն ու հետևելու վարակակրի հետ հնարավոր շփումներին, որպեսզի տեղանքում գրանցված COVID-19-ի բոլոր դեպքերի մասին դեպքի ծանուցումից մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաղորդի տեղի առողջապահության պատասխանատուներին:

- ❑ Աշխարհագրական մեծ տարածքներ ունեցող տեղանքի համար դիտարկեք տեղի աշխարհագրական տարածքում բնակվող այլ ճամբարականների այցելության սահմանափակումը և խնդրեք ճամբարականներին՝ խուսափել ճամբարների միջև տեղաշարժից:
- ❑ Ապահովեք բավարար պարագաներ, այդ թվում՝ օճառ, անձեռոցիկներ, անհպում աղբամաններ և առնվազն 60 տոկոս էթիլային սպիրտ պարունակող ձեռքի ախտահանիչներ՝ օժանդակելու առողջ հիգիենայի վարքագծին աշխատակազմի և այն ճամբարականների համար, որոնք կարող են անվտանգ օգտագործել ձեռքի ախտահանիչը:
- ❑ Սովորեցրեք ճամբարականներին հետևյալ անձնական պաշտպանիչ միջոցառումները.
 - Լվանալ ձեռքերը կանոնավոր կերպով ուտելուց առաջ և հետո, հազալուց կամ փռշտալուց հետո, դրսում գտնվելուց հետո և պետքարանից օգտվելուց հետո:
 - Խուսափել աչքերին, քթին և բերանին դիպչելուց:
 - Փակել բերանը հազալիս կամ փռշտալիս:
 - Քիթը մաքելու համար օգտագործել անձեռոցիկ և հազալիս/փռշտալիս փակել բերանը անձեռոցիկով կամ արմունկով:
- ❑ Դիտարկեք այնպիսի գրաֆիկներ, որոնք հնարավորություն կտան ճամբարի աշխատակազմին և ճամբարականներին կանոնավոր կերպով լվանալ ձեռքերը տարբեր ընդմիջումներով:
- ❑ Ճամբարականները և աշխատակազմը պետք է լվանան ձեռքերը օճառով՝ 20 վարկյան, օճառը քսելուց հետո լավ տրորելով, և ձեռքերը լավ չորացնելու համար օգտագործեն թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ):
- ❑ Աշխատակազմը պետք է ձեռքերը լվանա և ծառայի որպես օրինակ: Օրինակ՝ ավելի երիտասարդ ճամբարականների համար, օգտագործեք լոգարանից օգտվելու ժամանակը որպես հնարավորություն՝ ամրապնդելու առողջարար սովորությունները և վերահսկելու ձեռքերի պատշաճ լվացումը:
- ❑ Ճամբարականներն ու աշխատակազմը պետք է օգտագործեն ձեռքերի ախտահանիչ միջոց, երբ հնարավոր չէ լվանալ ձեռքերը: Ախտահանիչն անհրաժեշտ է քսել ձեռքերին, մինչև այն ամբողջությամբ կչորանա: Նկատի ունեցեք, ձեռքերը հաճախակի լվանալը ավելի արդյունավետ է, քան ախտահանիչների օգտագործումը՝ հատկապես երբ ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են:
- ❑ 9 տարեկանից փոքր երեխաները պետք է օգտագործեն ձեռքի ախտահանիչը մեծահասակների հսկողությամբ: Ախտահանիչը կույ տալու դեպքում զանգահարեք Թունավորումների Վերահսկման Կենտրոն՝ 1-800-222-1222 հեռախոսահամարով: Նախընտրելի են էթիլային սպիրտի հիմքով ձեռքի ախտահանիչները և պետք է օգտագործվեն, եթե հնարավոր է երեխաների կողմից դրանց օգտագործումը առանց վերահսկողության: Բոգոպրոպիլենային ձեռքի ախտահանիչները ավելի թունավոր են և կարող են ներծծվել մաշկի միջոցով:
- ❑ Դիտարկեք տարածքում ձեռքերի լվացման շարժական կայաններ տեղադրելու տարբերակը՝ հնարավորինս նվազագույնի հասցնելու տեղաշարժը և մարդկանց կուտակումը լոգարաններում:
- ❑ Ճամբարականներին պետք է խրախուսվի օգտագործել **դիմակներ**: **Դիմակը** պատշաճ օգտագործելու, այն

հանելու և լվալու վերաբերյալ տեղեկությունը պետք է տրամադրվի ճամփարի ամբողջ աշխատակազմին և ճամփարականներին:

- Դիտարկեք ցայտադրյունների օգտագործման կասեցումը և դրա փոխարեն խրախուսեք բազմակի օգտագործման ջրի շշերի օգտագործումը:
- Հաճախակի հպման մակերեսները, ինչպիսիք են՝ դռան բռնակները, լույսի անջատիչները, լվացարանների բռնակները, լոգարանի մակերեսները, սեղանները և փոխադրամիջոցների ներսի մակերեսները, պետք է մաքրվեն առնվազն ամեն օր և ավելի հաճախ օրվա ընթացքում, եթե հնարավոր է:
- Սահմանափակեք ընդհանուր օգտագործման խաղահրապարակների սարքավորումների օգտագործումը՝ փոխարենը նախապատվություն տալով ֆիզիկական գործողություններին, որոնք մակերեսների հետ ավելի քիչ շփում են պահանջում:
- Սահմանափակեք պարագաների և սարքավորումների համատեղ օգտագործումը, օրինակ՝ խաղալիքներ, խաղերի և արվեստի պարագաներ, հակառակ դեպքում մաքրեք և ախտահանեք դրանք յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Մաքրող ապրանքներ ընտրելիս, օգտագործեք այն ապրանքները, որոնք ընգրկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA) կողմից հաստատված՝ COVID-19-ի դեմ արդյունավետ ապրանքների «N/Ն» ցուցակում, և հետևեք ապրանքի ցուցումներին: Այս ապրանքները պարունակում են բաղադրիչներ, որոնք ավելի անվտանգ են ասթմա ունեցող անձանց համար:
- Օգտագործեք ախտահանիչներ, որոնց վրա նշված է, որ դրանք արդյունավետ են առաջացող վիրուսային պաթոգենների դեմ՝ հետևելով ապրանքի վրա նշված՝ նյութի նոսրացման մակարդակի և շփման ժամանակի վերաբերյալ ցուցումներին: Աշխատակիցներին վերապատրաստեք քիմիկատների վտանգների, արտադրողի ցուցումների և անվտանգ օգտագործման Կալիֆորնիայի Մասնագիտական Անվտանգության և Առողջապահության Վարչության (Cal/OSHA) պահանջների վերաբերյալ:
- Մաքրման աշխատանքներ կատարող աշխատակազմը, ով պատասխանատու է տարածքը մաքրելու և ախտահանելու համար, պետք է ունենա պաշտած պաշտպանիչ միջոցներ, այդ թվում՝ ձեռնոցներ, աչքերը պաշտպանող պարագաներ, շնչառական պաշտպանության պարագաներ և այլ համապատասխան պաշտպանիչ միջոցներ՝ ըստ ապրանքի ցուցումների պահանջի: Բոլոր ապրանքները պետք է պահել երեխաների համար անհասանելի, և սահմանափակ հասանելիությամբ վայրերում:
- Մաքրելիս օդափոխեք տարածքը մինչ ճամփարականների ժամանումը, ծրագրեք պաշտած մաքրել այն ժամանակ, երբ ճամփարականները ներկա չեն: Օդափոխման համակարգը օգտագործելու դեպքում օգտագործեք այն պարամետրը, որը բերում է մաքուր օդ: Փոխեք և ստուգեք օդի ֆիլտրերը և ֆիլտրման համակարգերը օդի օպտիմալ որակը ապահովելու համար:
- Եթե պատուհաններ բացելը անվտանգ չէ կամ վնաս է առողջությանը, դիտարկեք այլընտրանքային ռազմավարություններ օդի հոսքը բարելավելու համար, օրինակ՝ մեծացրեք ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգերի օդի կենտրոնական ֆիլտրացիան (HVAC) (առնվազն MERV 13 արդյունավետության հաշվետվության նվազագույն արժեքի ֆիլտրման չափով):
- Ձեռնարկեք քայլեր՝ ապահովելու, որ բոլոր ջրային համակարգերը (օրինակ՝ ցայտադրյունները, դեկորատիվ շատրվանները) անվտանգ լինեն օգտագործման համար՝ հաստատության երկար ժամանակ փակ լինելուց հետո՝ նվազագույնի հասցնելու այնպիսի վարակների հավանականությունը, ինչպիսին է Լեգիոնների հիվանդությունը:

ՍՏՈՒԳԵՔ ՃԱՄԲԱՐԱՎԱՆՆԵՐԻՆ

- Վերապատրաստեք աշխատակազմին և սովորեցրեք ճամփարականներին և նրանց ընտանիքներին, թե

երբ նրանք պետք է մնան տանը և երբ կարող են վերադառնալ ճամբար: Ակտիվորեն խթանեք աշխատակազմին և ճամբարականներին, ովքեր հիվանդ են, կամ վերջերս սերտ շփում են ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, մնան տանը:

- ❑ Բացի աշխատակիցներին ստուգելուց, երբ նրանք ժամանում են, բոլոր ճամբարականները ևս պետք է ստուգվեն հաստատություն հասնելուն պես:
 - Դիտարկեք ժամանելուն պես բոլոր ճամբարականների առողջական վիճակի տեսողական ստուգումը, որի մեջ կարող է ներառվել առանց հպման ջերմաչափով ճամբարականների ջերմաչափում ամեն օրվա սկզբին: Եթե առանց հպման ջերմաչափեր հասանելի չեն, ընդունելի է նաև զեկուցվող ջերմաստիճանի գնահատումը:
 - Հաստատությունից պահանջվում է հետևել Հանրային Առողջապահության՝ [Որոշումների վերաբերյալ ցուցումներին](#)՝ նախատեսված այն անձանց համար, որոնց մոտ մինչև հաստատություն մտնելը ախտանիշները դրական են: Բոլոր անհատներին հարցրեք վերջին 24 ժամվա ընթացքում COVID-19-ի ախտանշանների մասին և թե արդյոք նրանց տանը որևէ մեկի մոտ գրանցվել է COVID-19-ի թեստի դրական արդյունք: Հարկավոր է անցկացնել ախտանշանների ստուգումներ՝ նախքան այցելություններին կյույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն Որոշումներում նշված COVID-19-ի հնարավոր վարակի հետ համընկնող ախտանիշների ստուգում: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [նշաններով](#), որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
- ❑ Բացառեք ցանկացած երեխայի, ծնողի, խնամատարի, կամ աշխատակցի, որը ունի COVID-19 վարակին բնորոշ ախտանիշներ, կամ հայտնի է, որ շփում է ունեցել հաստատված COVID-19-ով վարակված անձի հետ:
- ❑ Վերահսկել աշխատակիցներին և ճամբարականներին ամբողջ օրվա ընթացքում՝ հիվանդության նշանների հայտնաբերման համար. ճամբարականներին և աշխատակիցներին ուղարկեք տուն COVID-19 վարակի համապատասխան ախտանիշների դեպքում: Եթե անհրաժեշտ է, ուղարկեք մարդկանց համապատասխան բժշկական հաստատություն, այլ ոչ թե տուն:

ԵԹԵ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԿԱՄ ՃԱՄԲԱՐԱԿԱՆՆԵՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԵՆ

- ❑ Սահմանեք մեկուսացման սենյակ կամ տարածք՝ առանձնացնելու այն անձին, որն ունի COVID-19-ի ախտանիշներ:
- ❑ Ապահովեք, որ նրանք կրեն կտորե **դիմակ**, կամ բժշկական դիմակ, եթե 2 տարեկանից մեծ են, և որ դիմակը դնելու և հանելու հետ կապված խնդիր չունեն, ինչպես նաև չեն դժվարանում շնչել դիմակը կրելիս:
- ❑ Ախտանշաններ ունեցող ճամբարականները կամ անձնակազմը պետք է մնան մեկուսացման սենյակում մինչ նրանց կկարողանան տեղափոխել տուն կամ բժշկական հաստատություն, որքան հնարավոր է շուտ:
- ❑ Սահմանեք հիվանդ անձին, ըստ անհրաժեշտության, անվտանգ ձևով իրենց տուն կամ բժշկական հաստատություն տեղափոխելու ընթացակարգեր: Անհապաղ զանգահարեք 9-1-1, եթե անձն ունի շարունակական ցավ կամ ճնշում կրծքավանդակում, շփոթվածություն, կամ կապտավուն շուրթեր կամ դեմք:
- ❑ Խորհուրդ տվեք աշխատակազմի հիվանդ անդամներին և ճամբարականներին չվերադառնալ, մինչև նրանք կհամապատասխանեն ճամբարի տեղանքին վերադառնալու պահանջներին, որոնք նշված են ախտանիշներ ունեցողների համար նախատեսված [Որոշումներում](#):

- ❑ Տեղեկանալով, որ անձնակազմի անդամի կամ ճամբարականի մոտ գրանցվել է COVID-19-ի թեստի դրական արդյունք, հաստատությունը պետք է վարակված անձին հրահանգի մեկուսանալ տանը, իսկ բոլոր անձանց, ովքեր շփվել են վարակված անձի հետ, պետք է հրահանգվի մնալ կարանտինի մեջ: Վարակման դեպքերը կվերանայվեն՝ գնահատելու, թե որ անձանց է անհրաժեշտ կարանտին պահպանել, ներառյալ՝ վարակված անձի հետ նույն խմբում կամ դասարանում գտնվող բոլոր անձանց կարանտին պահպանելու հնարավորությունը, եթե հնարավոր չէ բացառել վարակումն ամբողջ խմբում: Լրացուցիչ մանրամասների համար՝ տե՛ս Հանրային Առողջապահության Վարչության ուղեցույցը մեկուսացման (<http://ph.lacounty.gov/covidisolation>) և կարանտինի (<http://ph.lacounty.gov/covidquarantine/>) մասին:
- ❑ Հաստատություններից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը հաղորդել հաստատված COVID-19-ով վարակված աշխատակիցների և ճամբարականների մասին, որոնք նախքան հիվանդանալը 14 օրերի ընթացքում գտնվել են հաստատության ցանկացած տարածքում: Հանրային Առողջապահության Վարչությանը հաստատության տարածքում COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել ապահով առցանց զեկուցման տարբերակով, և դա կարելի է անել համակարգիչով կամ հեռախոսով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ-հավելվածին՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>: Եթե առցանց զեկուցել հնարավոր չէ, ապա կարելի է զեկուցել ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Դեպքերի և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#), և այն ուղարկելով ACDC-Education@ph.lacounty.gov էլեկտրոնային հասցեին: Դեպքի մասին բոլոր ծանուցումները անհրաժեշտ է ներկայացնել դեպքի մասին տեղեկանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, եթե 14-օրյա ժամանակահատվածում հայտնաբերվում են COVID-19-ի դրական պատասխան ունեցող 3 կամ ավելի անձինք, այդ մասին պետք է անմիջապես հաղորդել տեղային առողջապահության պատասխանատուներին՝ կիրառելով զեկուցման վերնոշյալ տարբերակը: Հանրային Առողջապահության Վարչությունը կհամագործակցի դպրոցի հետ՝ որոշելու, թե արդյոք խմբակային վարակման դեպքը բնկում է, որի դեպքում անհրաժեշտ կլինի հանրային առողջապահության կողմից քննություն: Զեկուցման և ծանուցումների մասին մանրամասն տեղեկությունների համար դիմեք [Վարակման Կառավարման Ծրագրի](#) հղումին:
- ❑ Փակեք այն տարածքները, որոնք օգտագործվել են որևէ հիվանդ անձի կողմից, և մի՛ օգտվեք դրանցից մինչև մաքրելը և ախտահանելը: Հնարավորության դեպքում սպասեք 24 ժամ, կամ այնքան, որքան անհրաժեշտ է տարածքը մաքրելուց կամ ախտահանելուց առաջ:
- ❑ Ապահովեք ախտահանիչ միջոցների անվտանգ և ճիշտ օգտագործումը՝ օգտագործելով անձնական պաշտպանիչ միջոցներ և մաքրման համար խորհուրդ տրվող օդափոխություն: Մաքրման և ախտահանման պարագաները պահեք երեխաներից հեռու:
- ❑ Խորհրդակցելով Հանրային առողջապահության տեղային վարչության հետ՝ ճամբարի համապատասխան պատասխանատուն կարող է դիտարկել՝ արդյոք ճամբարի փակումը և ժամանակի տևողությունը՝ երաշխավորված է և հիմնավորված՝ ելնելով տվյալ համայնքի վտանգի մակարդակից:

ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

- ❑ Պահեք յուրաքանչյուր ճամբարականին պատկանող պարագաները առանձին և անհատական պիտակներով տարաներում, արկղերում, կամ տարածքներում: Ապահովեք, որ անձնական իրերը տանեն տուն ամեն օր՝ մաքրելու և ախտահանելու համար:
- ❑ Ապահովեք բավարար պարագաներով՝ հնարավորինս նվազագույնի հասցնելու հաճախակի հպման պարագաների համատեղ օգտագործումը (արվեստի պարագաներ, սարքավորումներ և այլն), կամ սահմանափակեք պարագաների միաժամանակ օգտագործումը երեխաների մեկ խմբում և ախտահանեք յուրաքանչյուր օգտագործման ընթացքում:
- ❑ Հնարավորության սահմաններում խուսափեք էլեկտրոնային սարքավորումների, հագուստի,

խաղաղիքների, գրքերի և այլ խաղերի, կամ ուսմանն օժանդակող նյութերի համատեղ օգտագործումից:

Դ. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Պահպանել հաղորդակցման համակարգեր, որոնք աշխատակազմին և ընտանիքներին հնարավորություն են տալիս ինքնուրույն զեկուցել ախտանշանների առկայությունը և ստանալ արագ ծանուցումներ՝ վարակման և փակման վերաբերյալ՝ պահպանելով գաղտնիությունը:
- Սույն արձանագրության պատճենը փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Տեղադրված են նշաններ ամբողջ տարածքում՝ հիշեցնելու հրահանգիչներին և ճամբարականներին ֆիզիկական հեռավորության պահպանման և **դիմակների** օգտագործման մասին:
- Փակցված են նշաններ, որոնք ցույց կտան այցելուներին, որ նրանք պետք է տանը մնան, եթե հիվանդ են շնչառական ախտանշաններով:
- Հաստատության առցանց միջոցները (կայքեր, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) հստակ տեղեկություններ են տրամադրում ֆիզիկական հեռավորության, **դիմակների** օգտագործման և այլ հարցերի վերաբերյալ:

Ե. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Առաջնահերթություն է տրված ճամբարականների համար կարևորագույն ծառայություններին:
- Ձեռնարկված են միջոցառումներ՝ տրամադրելու ծառայություններ այն ճամբարականների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր վտանգի տակ:

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսի սեփականատերը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի, կամ մեկնաբանության համար կարող էք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կոնտակտային անձի անուն՝

Հեռախոսահամար՝

Վերջին վերանայման ամսաթիվ՝
